710

Ես շտապում եմ խորանը Քո՝ հանդիպելու Քեզ:
Ես գալիս եմ առջևը Քո՝ հանդիպելու Քեզ:
Չեմ ուզում դատարկ հեռանալ,
Չեմ ուզում ծարավ հեռանալ,
Տո՛ւր տեսնել երեսը Քո
(Տո՛ւր, որ լսեմ ձայնը Քո):

Սիրտս ու հոգիս ծարավում է Քեզ,
Առանց Քեզ ահա ցամաքում եմ ես,
Առանց Քեզ, ասա՛, ասա՛ ի՞նչ անեմ,
Առանց Քեզ, ասա՛, ասա՛ ո՞ւր գնամ:
Դու միայն, Հիսո՛ւս, ապավեն ես ինձ,
Քո սերն է միայն, որ ապրեցնում է ինձ,
Քեզ համար, Հիսո՛ւս, ահա սիրտս՝ ճեղքված,
Քո սիրո համար էլ փակ դռներ չկան:

Քո սիրո համար հիվանդ եմ ես,
Քո անհուն սիրով ապրում եմ ես,
Փարվում եմ Քեզ:
Ահա շտապում եմ հանդիպելու Քեզ,
Իմ հոգու փափա՛գ, սիրում եմ Քեզ,
Գալիս եմ Քեզ:

Չեմ ուզում դատարկ հեռանալ,
Չեմ ուզում ծարավ հեռանալ,
Տո՛ւր տեսնել երեսը Քո
(Տո՛ւր, որ լսեմ ձայնը Քո):

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025